են գաղթել, դաւանանքով մինչ կրօնի են պատկանում, նրանց խարակտէրը, զբաղմունքը, տնտեսական-կուլտուրական և քաղաքացիական վիճակը և այլն։

Ձը սիրելիս,
Քո՝
ԱՐԱՄ

Փէրիա-Սվարան, 30 Օգոստոս, 1918.

Թանկագին Վարդուհի,

Անցեալ նամակումս խոստացել էի գրել Քեզ այս գաւառի հայ ազգաբնակութեան ու նրա կեանքի այլևայլ երևոյթների մասին. այժմ կատարում եմ խոստումս, միայն ներիր ինձ, սիրելիս, որ այդ բոլորն ես Քեզ պիտի նկարագրեմ շատ համառօտ ընդգծումներով և առանձին-առանձին վերնագրերով։

* * *

Ազգաբնակութիւնը: Փէրիայի ազգաբնակութիւնը բաղկացած է զանազան ցեղերից՝ պարսիկ, հայ, լօռ, վրացի (գուրջի) և այլն. սրանք բնակւում են բազմաթիւ գիւղերում։ Այդ գիւղերից 16-ը՝ Նամակերտ, Ղառղուն, Սվարան, Դրախտակ, Արթունաբաղ, Ղալամելիք, Միլակերտ, Շուրիշկան, Շահբուլաղ, Խունկ, Բժկերտ, Սանգիբարան, Վերին Խոյգան, Դաջան, Հաղան և Բոլորան զուտ հայաբնակ են. 8-ը՝ Զիգան, Սնկերտ, Ադիգան, Բարդաշա, Ներքին Խոյգան, Ազնաւուլ, Հա-